

գիտէին որ Ստրուսերգից բանին մէջ մտցրած թղթերը երևակայական են, ոչինչ զին չու- նեն, բայց յոյս ունէին թէ գործը կը ղրտովի, խաբեայութիւնը չի երևայ, իսկ նրանցից իւրաքանչիւրը այդ խաբեայութիւնը ծած- կելու համար ստացաւ 100 հազար ռուբլից աւելի կաշառք նոյն Ստրուսերգից: Աւելի լաւ չէր լինի, կասէ ընթերցողը, որ նոքա ուղղակի բանից գործնային երկու, երեք հարիւր հազար ռուբլ. և իրանց մէջ բաժա- նէին այդ գումարը: Բաները գործնայից այնքան չէր ֆիասով, մանաւանդ որ այդ պարոնները գրեթէ առանց կոնտրօլի առանց որ և է վերահսկողութեան, կամայական կերպով կա- ռավարում էին բանի գործերը... Գոնէ այն ժամանակ բանիը ցոյց կը տար մի յայտնի ապառիկ, դէՖլիցիտ, բայց չէր սնանկանայ, ուրեմն և բազմաթիւ ընտանիքներ աղքա- տութեան և մուրացկանութեան անդունդի մէջ չէին զորովի...

Այդ, այդ ճշմարիտ է, այդ նոքա կարող էին անել, և աւելի լաւ կը լինէր եթէ անէին, բայց նոքա վախեւում էին որ այդ տեսակ գործ կանուանվել գողութիւն, այն ինչ Ստրուսերգին 8 միլիօն ռուբլ. փոխ տարով և նրա երեակայական թղթերը ընդունելով բանի մէջ, նոքա վերցրած հարիւր հազար- ներով կաշառք չէ անուանվում խաբեա- յութիւն կամ գողութիւն, այլ միայն կօմի- սիայի համար վարձ... Ահա բանիային փի- լիսօփայութիւնը, ահա Ֆինանսիստների բա- րոյական սկզբունքները, որոնց շնորհով նոքա սնանկացրին իրանց ձեռքին յանձնված հա- սարակական հիմնարկութիւնը և բազմաթիւ բաժանորդների և բանի մասնակցողների ըն- տանիքները: Իսկ խորհրդի անդամները, բա- ւական չէ որ վերահստութիւն չէին գործում, վարչութեան վրա, բայց երբ որ տեսնէ թէ բանը անանկանալու վրա է, սկսեցին յետ առնել բանից իրանց սեփական, իրանց կա- նանց և ազգականների դուռները:

Պ. Ստրուսերգի փիլիսօփայական սկզբունք- ներն էլ շատ ուսանելի են: Դա պարզ յայտ- նեց դատարանում որ կաշառքներ աջ ու ձախ բաժանելով, նա օտարազգի լինելով, յարմարվում էր երկրի (Ռուսաստանի) սովո- րութիւններին: Եթէ նա, որ կաշառք բա- ժանում է, մեղադրել է, ասում էր Ստրուս-

բերգ աներկիւղ, ուրեմն նոյնքան մեղադրել է և նա, որ կաշառք ընդունում է, իսկ Ռուսաս- տանում նորա կարծիքով ոչ մի գործ, ոչ մի ձեռնարկութիւն չէր կարելի առաջ տանել առանց աջ ու ձախ կաշառքներ բաժանե- լու... Ինչ մեղադրում են, ասում էր նա, որ ես պիտի իմանայի թէ բանի կանոնադրու- թիւնը արգելում է այդ տեսակ ապահովու- թիւններով փոխառութիւնը. ես պարտաւոր- չեմ ծանօթ լինել բանի կանոնադրութեան հետ,—այդ վարչութեան և խորհրդի գործն է ընդունել կամ չընդունել առաջարկվող ա- պահովութիւնները: Ես ընդհակառակն գիտէի որ այդ տեսակ օպերացիաները ուսուց բան- կերում թող են տրվում: Ս. Պետերբուրգի փոխադարձ կրեդիտի ընկերութիւնը կարող էր նոյնպէս ընկնել և նրա դիրեկտորները կա- րող էին նոյնպէս նստել մեղադրվածներին նրա- տարանի վրա, բայց պ. Նամանսկի (պետական բանի կառավարիչ) որ մասնակցում էր այն ընկերութեան մէջ, փրկեց նրան: Երբ փո- խադարձ կրեդիտի ընկերութիւնը բաժանվե- ցաւ պետական բանից, նրա կասսայի մէջ գտան 16 միլիօն ուլինչ չարժող ապահո- վութիւններ, բայց դարձեալ ուլինչ ֆիաս չեղաւ: Վոյժօօկօ-Վամսկի բանկը, որտեղ նոյն- պէս մասնակցում է պ. Նամանսկի, կարող էր տաս անգամ սնանկանալ, բայց այնու ամե- նայիւ նա շարունակում է գոյութիւն ունե- նալ: Նրանց փրկում էր պ. Նամանսկի արքունի միլիօններով: Եթէ նա օգնէր և այդ դէպ- քում,—ուլինչ չէր պատահէ: Տուեցէք ինչ պրօկուրօրութեան իրաւունքները՝ և լիազո- րութիւնը,—և ես կը նստայնեմ բոլոր ուսու- բանիքը, աշխարհի բոլոր բանիքը մեղադրե- վածների նստարանի վրա...» Պոլանսկի ընդ- հակառակն իրան ձեռնցում էր խաբված, մղրված անմեղութիւն...

Այդ ամօթալի գործը, յոյս ունեց, մի լաւ դաս կը լինի ուսու բանիային գործողների և միամիտ հասարակութեան համար: Ցա- ւալի է որ մենք շատ բաներում ընդունում ենք Եւրօպայից միայն արտաքին ձեւերը, ար- տաքին տեսքը, բայց եթէ խորը նայինք, ար- տաքին ձեւով ընդունված եւրօպական հիմ- նարկութիւնները շատ անգամ ուլինչ հող- ուլինչ հիմք չունեն մեզ մօտ իրանց ուսների տակ...

արվեստական կերպով զարգացած են, ժողովուրդը հասկացող է, եււանդոտ է, ունեւոր է, արդիւնա- բերող է, աշխատասէր է, ամեն տեղ թաղաւորում է մաքրութիւն, գիւղական բնակիչների տները թէև համեստ, բայց յարմար, լաւ չինած և պահպանված են, ամեն տեղ գեղեցիկ, մաքուր փողբիկ եկեղե- ցիներ, ուսումնարաններ... Իսկ կաթիլի կանտօնը չունի ձառնապահներ, չինականների խրճիթները կիսաւեր ընկած են, հողը գրեթէ անուշակ թողած է, անտառները վատ պահպանված են, ուսումնարան- ները անհոգ դրութեան մէջ են, ամեն տեղ անմաք- րութիւն, ամբոխի մէջ տիրում է համեմատաբար մեծ աղքատութիւն, արդիւնազօրութեան ոգի մեռած է, եււանդը ժողովրդի մէջ սառած է, դրադի- տութիւնը տարածված է միայն այն հանգամանքի շնորհով որ Եվրօպայում ուսումը օրէնքով իւ- րաքանչիւր քաղաքացու համար պարտադիր է...

Բողոքականութիւնը համեմատելով կաթիլիւ- թեան հետ, իր հիմքի մէջ ունի ազատական սկըզ- բունքներ, մարդին անհատապէս զարգացնող տար- բեր, նա թող է տալիս ազատ քննութիւնը, նա միջոց է տալիս մարդին միշտ առաջ գնալ, միշտ զարգանալ, միշտ կատարելագործվել և կատարելա- գործվելով մօտենալ կամ գոնէ ձգտել իր Արարչի մօտենալուն, նմանվելուն...

Դա անշարժ, անդայման չէ կաթիլիւթեան պէս, որ կարող է պահպանվել, գոյութիւն ունե- նալ միայն մի պայմանով՝ որ առաջադիմութեան, վերանորոգութեան մի քայլ չանէ, նոր մտքի մի նշոյլ, լուրի մի ձառադարձ չընդունէ իր մէջ...

II

Մասնատակաւորութեան և մասնատակաւորութիւնը ընդունած ցեղերի անշարժութեան պատճառը, առջիկ այդ վարդապետութիւնը ընդունած մի քանի ցեղերի բնական ցեղական անշարժական ոգուց,

ինչպէս մօնղոլական ցեղի, զիւսաւորապէս կայա- նում է և իրան մասնատակաւորութեան մէջ:

Մասնատակաւորութիւնը դարերով չէ թող տալիս ոչ մի փոփոխութիւն, ոչ մի առաջադիմութիւն, ոչինչ վերանորոգութիւն: Եթէ փոխէք մի առաւ- մասնատակաւորութեան մէջ, նա այլ ևս մասնատա- կանութիւն չի լինի: Մասնատակաւորութիւնը որ ուրիշ կերպ է մտածում քան թէ նրա հայրը, պապը, քան թէ 500 տարի առաջ նրա նախնայրերը մտածել են,—նա այլ ևս մասնատակաւոր չէ, նա մասնատակաւորութենից դուրս է եկել...

Մասնատակաւորութեան sine qua non գոյութեան պայմանը այն է, որ նա սառած, անշարժ մնայ դարերով:

Իսկ այն սկիզբը որի գոյութեան զիւսաւոր պայ- մանը յաւիտեական անշարժութիւն է, նա բնա- կանապէս պէտք է լինի ստրկացնող, ճնշող, ան- պայման բռնաւոր...

Երևակայեցէք ձեզ մի ամբոխ, որ ցեղին և պատկանէր նա, որին թող տուած չէ դարերով իր բարոյական զարգացման մէջ մի քայլ անել դէպի առաջ, և պարզ կը լինի ձեզ որ այն ամբոխի հա- սարակական, մտաւոր, տնտեսական և քաղաքա- կան կիւնքը վրա կը դրօշմվի այդ անշարժութեան դատակնքը:

III

Այժմ կը հարցնեն մեզ՝ ուրեմն ինչ էք կամե- նում: Կամենում էք որ քրիստոնէութիւնը տա- րածվի մասնատակաւոր ամբոխի մէջ:

Ոչ, մենք չենք պատկանում այն կուսակցու- թեանը, որ բռնի կերպով կուզէր տարածել այս կամ այն կրօն, այս կամ այն ամբոխի մէջ, որ թող տար իրան անզօղ կերպով դիպչել մարդկային այն նուրբ զգացմունքին՝ հաւատի, կրօնի կոյր հոյա- տակութեան: Մենք չենք կամենում առաջարկել

Պատարանի վճիռը, ինչպէս հաղորդում է հեռագիրը, յայտնվեցաւ վերջապէս նոյնմբերի 2-ին: Բոլոր մեղադրվածները զրկվում են իրանց իրաւունքներից և աքսորվում են՝ Պօլխան- կի և Նանդաու Տօմսկի նահանգի կեցու- թեան համար, Բօրխօօվսկի Սլոնեյկի նա- հանգը, Շոումախէր դատապարտված է մի ամսվայ բանտարկութեան, և վերջապէս ինքն Ստրուսերգը արտասահման աքսորվե- լուն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ՄՕՍԿՎԱՑԻՑ

Հայի մտաւոր կրթութիւնը և հասարակական կեանքը փոքր առ փոքր զարգանալով — մօտեց- նում են նրան ինքնաձայնակութեան: Դա աւելի ու աւելի սկսում է հասկանալ այն դերը, որ դրել է նրա վերա թէ բնութիւնը և թէ մարդկութեան պատմութիւնը — սկսում է ճանաչել իւր տեղը ընդ- հանուր մարդկութեան կեանքի մէջ: Գիմարվ դէպ իւր պատմական կոչման իրագործումը՝ նրա մէջ մտնում է ա մ բ ո ղ զ ու թ ե ա ն զգացումը և օրուտների սերտ փոխադարձութիւնը ու ընդհան- րութիւնը...

Բայց զգալը դեռ չէ նշանակում և կատարել Սլոնեյկի մեր դրութեան մէջ մեք շատ քիչ ենք հոգում գործնականապէս մեր ասածների իրա- գործման վերա: Մեք իսկապէս չը գիտենք ոչ մեր երկիրը, ոչ մեր բնական հարստութիւնները և նիւ- թական կարողութիւնը, ոչ մեր ազգային սեպհա- կան կեանքը, ոչ մեր հարկանների դրութիւնը և մեր ու նրանց փոխադարձ ազդեցութիւնը միմեանց վերա:

Հայերը բաժանված լինելով մի քանի պետու- թիւնների մէջ, սահմանները կարծես նոյնպէս պա- տեր են դարձել հայերի համար: Այդ պատերը բաժանում են այդ ազգի զանազան մասերը մի- մեկից: Եւ այդ բաժանումը երևում է ոչ միայն մեր ժողովրդի տգէտ դասի մէջ, այլ և աւելի կրթված ու զարգացած մասերում:

Ասածներին ապացոյց կարող են լինել մեր գրա- կանութիւնը և գրականական լեզուն: Դրանցով են կատարվում մտքերի փոխանակութիւնը և մի- մեանց հասկանալը, բայց տեսնենք որչափ է այժմ նա ծառայում մեր նպատակին: Այն ինչ որ դըր- վում է և տպվում է մեղանում, մնում է անյայտ թիւրքաւայտակ հայերին և ընդհակառակը: Մեր ազգային և ժողովրդական կեանքի նկարագիրները չեն կարգացվում այնտեղ և նրանց էլ այնտեղ:

մի ցեղի ամենաթանկագին, դարերով սրտերի մէջ արմատացած զգացմունքը վերաւորել այն զգաց- մունքը, որ ամբողջի դարերով դաստիարակել, կրթել է, որ նրա երկրորդ բնութիւն է դարձել, որքան և հաւատացած, համոզված լինէինք, թէ այն կրօնը, այն վարդապետութիւնը անընդունակ է ամբողջ հասարակապէս կանոնաւոր կերպով զար- գացնելու, որքան և համոզված լինէինք թէ այն վնասակար վարդապետութիւնը դէպք կորուստ է տանում ամբողջ ազգութիւնները...

Մարդի այդ ամենաթանկագին զգացմունքը, կրօնը, հաւատը վերաւորելով, կարելի է միայն իրա- նից յետ մղել այն կրօնը գաւառող ամբոխի հա- մակրութիւնը, և այնուհետեւ դուք ոչինչ ազդե- ցութիւն չէք կարող ունենալ նրա վրա...

Բայց այնու ամենայնիւ պարզ տեսնելով, հաս- կանալով, համոզված լինելով որքան անշարժ, ա- ռաջադիմութեան անընդունակ է մասնատակա- ւորութիւնը, որքան հիպոկաւ է նա մի հասարա- կութեան բարոյական, մտաւոր, հասարակական, տնտեսական և քաղաքական կողմերը զարգացնե- լու, մեզ մնում է չը դիպչելով իրան կրօնին, դա- ւանութեանը, միայն մի բան ցանկանալ, աչքի առնել ունելով մասնատակաւոր աշխարհի այժման ծանր, դժուար դրութիւնը, Թիւրքիայի քաղաքա- կան գոյութեան օրաստական դրութիւնը, նրա կրե- դիւնը,—մեզ մնում է ցանկանալ, ասում ենք, որ Թիւրքիայի, որպէս քաղաքական մարմնի ընկնե- լու, քանդվելու, քայքայվելու բոլորէին, լուսաւոր- ված աշխարհը մտածէր նրա աւերակների վրա հիմնել մի քանի քրիստոնէական պետու- թիւններ:

Միայն քրիստոնէութիւնը, մանաւանդ քրիստո- նէական կրօնի այն դաւանութիւնները, որոնք ա- զատ են կաթիլիական բռնաւոր, հակահասարա- կական սկըզբունքներից, կարող են հիմք լինելով

Մի և նոյն գրողի, մի և նոյն հեղինակի թարգմա- նութիւնը լինում է մեղանում էլ, նրանցում էլ: Այդպէս երևում է մասաւոր աշխատանքի բաժան- ման բացակայութիւն:

Մեղանում շատ քիչ ուշք են դարձնում բար- բառների ուսումնասիրութեան վերա, մինչդեռ դրանց խոր ուսումնասիրութեամբ միայն կարելի կը լինի հասկանալ մեր լեզուի բուն ազգային ոգին և նրա հարստութիւնը: Այդ ուսումնասի- րութեամբ միայն մի ժամանակ իրագործուած կը լինի մեր այժմեան գործածվող լեզուի կատարեալ զարգացումը և նրա նախնիներից պարզ բացա- արութիւնը: Մեք կարծում ենք որ մի քանի ու- սումնարաններում, դրօշմակ Նիւսիսեան զարո- ցում, Ալեքսանդրապոլի և Ղալաթի զարոցներում և այլն՝ պէտք է անպատճառ աւելացնել մեր- ջին դաստանն աւարկաներին և բարբառների ու դարձուածների ուսումնասիրութիւնը: Համակրելով առ հասարակ բոլոր բարբառների հետազոտու- թեան և խոստանալով մի օրիշ անգամ խօսել նրանց վերա, մեք այն հարցի վերաբերութեամբ, որի առթիւ գրվում է այս յօդվածը, աւելի ուշք ենք դարձնում առ այժմ Թիւրքիայի հայ դրա- կանութեան և լեզուի հետ մօտ ծանօթութեան վերա:

Միմեանց լաւ ճանաչել և հասկանալ, ապազան պարզ մեղ բացայայտել և դրան համապատաս- խան գործել — ահա մեր այժմեան ոյժերին ուղղու- թիւն տվող պայմանները: Ժամանակը թանգ է և դուր տեղն էլ շատ ենք նրան կորցրել:

Չը մոռանանք մի բան, որ հայը պատմութեան մէջ ճնշուած է եղել միշտ, մանաւանդ շնորհով մասնատակաւոր տարրի: Այժմս էլ ճնշվում է երկու դօրաւոր հարստահարութիւնների ազդեցութեան տակ: Դրանցից մէկը նիւթական հարստահարու- թիւնն է, միւսը բարոյական: Դրանք զանազան տեղերում զանազան կերպով են արտայայտվում. երկուսն էլ մեծ թշուառութիւնների պատճառ են լինում և դրանց շնորհիւ է, որ այսօր մեք այս- պիսի անգոհունակ դրութեան մէջ ենք...

Այդ երկու հարստահարութիւնների ազդեցու- թեան տակ ճնշվում է մեր անհատական զարգա- ցումը, մեր սեպհականութեան իրաւունքը, մեր լեզուն, մեր ազգային ինքնորոշումը...

Աշխատենք. կը զայ ժամանակ, երբ մտաւորա- պէս կը զարգանայ այդ ճնշուած ազգը, երբ նա պարզ և բացայայտ կը զանազանի սեր սպիտա- կից, կը հասնի իւր գիտակցութեան:

Քալանթար.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Ռուս «Правит. Вѣст.» պաշտօնական լրագրի հոկտեմբերի 31 համարի մէջ՝ հրատարակված են հետեւեալ խօսքերը, որ ասել է Նոյրն Կ ա յ ս եր ա -

նոր պետական կազմակերպութիւնների, նոր կեանք տալ այն երկրներին, այն ազգերին, որոնք ստիպ- ված կը լինեն միմեանցից բաժանվել, անշարժ, Թիւրքիայի որպէս քաղաքական մարմնի մեռնե- լուց յետոյ, կարող են նրանց բարձրացնել, նրանց փրկել...

Իսկ մասնատակաւորութիւնը թող մնան իրանց տե- ղում՝ ոչ ոք չէ աքսորում նրանց իրանց բնակեց- րած երկրից, ոչ ոք էլ չը պէտք է դիպչի նրանց կրօնական զգացմունքին:

Միայն մասնատակաւոր վարդապետութիւնը անըն- դունակ յայտնվելով 500 տարուց աւելի, մի հաս- տատ հիմք կազմել պետական կազմակերպութեան, անընդունակ յայտնվելով սեփականել նոր մտքեր, յարմարվել լուսաւորութեան հետ,—պէտք է որպէս պետական կրօն իր տեղը ուրիշ, մի աւելի ընդու- նակ, ազատամիտ, մարդի անհատական անընա- բարելի իրաւունքներ ճանաչող կրօնին տեղ տայ: Մասնատակաւորութեան անշարժական սկըզբունքը վրա հիմնված պետական կազմակերպութիւնը թող իր տեղը տայ մի ուրիշ կրօն դաւանող պետական մարմնին, որ իր մէջ կարող է ունենալ քաղաքակր- թութեանը դիմելու, նրան հասնելու, նրա պտուղ- ները ընդունելու յարմար բարոյական հիմունքներ:

Մասնատակաւորութիւնը ընդունած ազգերը, այն ժամանակ, որպէս մարդկային էակներ, առանց իրանց կրօնն էլ փոխելու, անկատարի կերպով կը զարգանան աւելի բարձր կրօնական և պետական սկըզբունք ունեցող տարրի ազդեցութեան տակ, ան- գիտակցական կերպով, առանց կրօնափոխ լինելու, հետզհետէ կընդունեն իրանց մէջ ընդհանուր մարդ- կային լուսաւորութեան և քաղաքակրթութեան արգասիքը:

Գ. Ա.

Ծափալ. Ի՛նչ կա՛մ ՕՐԵԼՆԻԿՆԵՐ, որոնք առաջ Օրբելնանի իշխանների
պատկանում, իսկ այժմ Բ՛ն Գ ա կ իսկ առաջուհներին: Կարո՞ւմ եմ բաղկացած
անտառային և արտառային: Այդ հողերը գտնվում են Բ՛ն-Գիլիցի ոչ հեռու:
և հետևյալներ են՝ Զաշտապալ, Պլապեա, Ժոպա, Պոզուս-Կիտան և արտառայինը
և Զաշտապալ: Գիլիցի հողերի տարածությունը 8 զեկտարովից աւելի է, ծափալ. են
և մաս մաս:

Պայանմաներ և գնի մասին հարցնել ԹԻՃԱԼԻՍՈՒՄ, իմանա՞նք ինքնաբերա-
տաբ. ա. ԳՕԴՂՈՒՄԸ ԵՑ

2 3)

Օտարաբնակաբնակները թող բարեհաճեն ճանաչաբարի ծախքը վճարել յոյշուկ միջոց
հետև առաքելու համար՝ Խաղողը են թէ՛ փողով, թէ՛ փորով, թէ՛ փորով յարկանելով: 34 (50)